

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊՈՒՐԿԱԶ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս Պուրկազի հայոց ս. Խաչ եկեղեցու վարչության և մի շարք պատվական ազգայինների նվիրյալ ջանքերով վերանորոգվել է այդ եկեղեցին, որը և օժտվել է արտաքին գեղեցիկ մի զանգակատնով:

Այս առթիվ Մայր Աթոռում ստացված մի գրություն Գամիր Ծիրինի ստորագրությամբ հաղորդում էր հետևյալը, որից քաղվածաբար ներկայացնում ենք որոշ հատվածներ:



Պուրկազի հայոց վերանորոգված ս. Խաչ եկեղեցին իր նոր զանգակատնով

«Պուրկազի և Այթոսի գերեզմանաքարերու արձանագրությունները որոնք անաղարտ մնացած են մինչև 1901 թվականը, կվկայեն թե, Պուրկազ և Այթոս անցյալի մեջ ունեցած են գաղթականություն մը:

Պուրկազ ունեցած է իր եկեղեցին դեռ 1808 թվականին ս. Աստվածածին անունով:

Նույնիսկ այդ թվականներուն հայություն գոյություն ունեցած է Պուրկազի մեջ, մեծամասնությունը նավամատույցի աշխատավորներե բաղկացած:

Ավելի ուշ, Պոլսո պանքայի դեպքեն հետո, կրկին հայ գաղթականություն մը եկած ու ցրված է երկրին խորերը:

Նույնպես 1922-ին ընդհանուր տարագրութենե հետո հոծ թիվով հայեր եկածապաստանած են Պուլկարիո մեջ:

Այսօր Պուլկարիա իր մեջ կհամրե 20000 շունչ հայություն, իսկ Պուրկազ՝ 1400:

Ունի մեկ եկեղեցի մը քաղաքին ճիշտ կեդրոնը ս. Խաչ անունով:

Ս. Խաչ եկեղեցվո տոմարական արձանագրությունները կսկսին 21 ապրիլ 1853-ի Սահակ վարդապետի հովվության օրով:

Եկեղեցին ունի մեկ քահանա տեր Գարեգին Տյուլկերյան անունով, մեկ լուսարար, երեք դպիր և ութը կիներե բաղկացած երգչախումբ մը:

Անցյալ տարի ավարտեցավ մեր եկեղեցվո կից «Պալքան թուրիսթ»-ի «Պուլկարիա» նորակառույց քսաներկու հարկանի արդիական շքեղ հյուրանոցը: Այդ հյուրանոցին շինությամբ քաղաքի քաղաքակառուցման պլանին համաձայն եկեղեցին ալ փլցվելու ենթակա էր:

Եկեղեցական վարչությունը անմիջապես նախազգուշական միջոցներ ձեռք առավ:

Հայ եկեղեցիի մասին պատմական տվյալներ հանձնվեցավ Սոֆիայի հնությունների պետական հաստատության

Սոֆիայի հնություններու պետական հաստատութենեն մասնավոր հանձնախումբի կողմե ստուգելե վերջ մեր եկեղեցին ճանչցվեցավ որպես հնություն ու արձանագրվեցավ կալվածական հնություններու շարքին, զերծ մնալով որևէ փլուզումե:

Այդ տարված աշխատանքներե քանի մը ամիս հետո պաշտոնական նամակ մը

ստացավ եկեղեցական վարչությունը, որուն մեջ կհրահանգվեր, եկեղեցին իր գոյությունը պահելու համար ներկա տհաճ վիճակեն դուրս բերել ու արտաքին երևույթին գեղեցիկ ձևավորում մը տալ, ներդաշնակելու համար շքեղ հյուրանոցին կողքին, առանց խախտելու նաև հնության ձևը:

Անմիջապես սկսան նախապատրաստական տեխնիկական աշխատանքները, և հետո՝ շինարարական գործը:

Նկարվեցան եկեղեցվո ներսի ու դուրսի մասերը:

Եկեղեցվո քարապատման գործին ձեռնարկվեց: Դուրսը, ներսը մարմար քարերով, վերնատունը, ինչպես նաև կոչնակատունը գեղեցիկ հայկական ոճով, որով եկեղեցին արտաքին վայելուչ երևույթ մը ստացավ:

Ընդհանուր շինարարությունը եկեղեցական վարչության արժեց 26000 լևա, որուն մեկ մասը ապահովելու համար փոխառություն կնքվեցավ քույր եկեղեցիներու հետ:

Եկեղեցվո ներկա վերանորոգումը խոշոր ձեռնարկ մըն էր, որ գլուխ հանվեցավ կարգ մը ազգայիններու զոհաբերության, նվիրումին, ինչպես նաև վարչության աչալուրջ աշխատանքներուն շնորհիվ:

Փառք ու պատիվ բոլորին: Վերանորոգված եկեղեցին իր նոր զանգակատունով կոթող մը պիտի մնա եկող-գացող սերունդները հիշեցնող»: